

դամոց, կամ փոխաղբուելով այլուր կը վաճառուին դարձեալ ՚ի շահ
աղքատին ընտանեաց :

Կաթը թէ վաճառուելու և թէ կարագի շինութեան գործածելու
համար, պէտք է ըստ կարելոյն երկար ժամանակ իւր բնական զիր-
քին մէջ պահել, այսինքն քաղցր . սակայն դժբաղդաբար շուտով
կ'ապականի, կը թթուի և իսկոյն կը մածնի (Coagule) արագու-
թեամբ թէ բաց օդոյ և թէ գոց ամանի մէջ իւր շաքարային մա-
սունքը կը փոխուին այն ատեն ի կաթնական թթուուտ (Acide lacti-
զու) ներգործութեամբ իր մէջ գտնուած միկրոպաց, և այս թը-
թուուտը կը խտայնէ զպանրածին :

Այս սերմունք, այս միկրոպը որ զկաթը կը փոխեն յայլ նիւթ,
իրենք ուսկից յառաջ կու գան բազմաթիւ պատճառներէ՝ զորո ան-
հրաժեշտ կրնանք ենթադրել, որովհետեւ մասնաւորապէս կաթն-
տու կովը, կթող ձեռքերը, և ամանները յորս փոփոխակի կը զորուի
կաթը, շատ անգամ ընդհանրապէս ըստ բաւականին մաքուր չեն
պահուիր. դարձեալ թերեւ յաճախ ախոռոց և կաթնատանց օդոյ
ծանր բուրդումներէն, յառաջ կու գան :

Ըստ կարելոյն երկար ժամանակ կաթը քաղցր և առողջ պահելու
համար՝ առաջին դիտելու կանոնն է ուրեմն ամենամաքուր վիճակի
մէջ պահել կաթին համար հարկաւոր եղած ամէն պարագայները,
կովին և կիթելէն սկսեալ մինչեւ նորա գործածութիւնն : Այս խնամոց
և պարագայից ամէնն ալ հոս մէկիկ մէկիկ չենք կրնար յիշել. միայն
կը յանձնենք վերջին աստիճանի մաքուր պահել կաթնտու կովին
ծծերը, զայն կթող ձեռքերը և կաթին ընդունարաները. յետոյ
պէտք է զիտել որ ախոռուները և կաթնատունները ըստ բաւականին
օդոյ հոսանաց փոփոխութիւն ունենան, զով ըլլան առանց յանկար-
ծակի բարեխտութեան փոփոխութեան. վերջապէս հեռի ըլլան օ-
դային աղտոտ և ծանր բուրմանց ազդեցութենէն :

Շարունակելի

ԳՆԱՅՑՈՒՆ ՊՈՂԻՊՈԴ

Մուկուայի բնական պատմութեան համբաւաւոր ուսուցիչն Տօբիթ,
Քորոտնօթ, այս վերջերս նորագիւտ կենդանաբուսի մը նկարագիրը
ծանօթացուց բովանդակ ուսումնական աշխարհի, որ և կենդանա-
բանից համար քար գայթակղութեան եղաւ, չգիտնալով այս կեն-
դանին յորում դասի վերաբերել : Այս կենդանաբոյսը՝ որ գնաւ-
յուն Գոդիպոդ անունը առաւ, գտնուեցաւ ֆիլիպպակեան ծովուն մէջ
Վիլլաֆրանգայի թուսա - Գաղղիիական կայարանին հմուտ տեսչէն,

անմիջապէս Մինդանաոյ և Բիլիտոն կղզիները իրարմէ բաժնող նեղուցին մէջ։

Եթբոր այս կենդանին տղմահան գործւով վեր հանեցի, կը զրէ նոյն բնագէտը, կակուղ կծիկի կը նմանէր ի գոյն մութ գեղնագոյն, շագանակի մը մեծութեամք, ինքն իր վրան փաթթուած և լի կոծիծներով։ Այս ետկը առանձնացընելով չըալից գաւաթի մը մէջ,



գնայուն Պողիպոդ (Polyparium ambulans).

շուտով մը բակեց իր ծալքերը և տարածուեցաւ երկնցաւ, կծիկը վերածուեցաւ բաւական հաստութեամք երիզի մը, և այն կոծիծներէն իւրաքանչիւրը կը բացուէին կը դոցուէին, բերնի պաշտօն կատարելով. և բովանդակ մարմնովը կը ջանար կ'աշխատէր գաւաթին եղերաց վրայ մարմելով վեր ելլեւ։

Մեր առաջիկայ պատկերը կը ներկայացընէ զպողիպոդը պլուած գորգոնի ճիւղի մը վրայ, որոյ վրայ յաճախ կու գայ կը միանայ նոր

տեսակ պողիպոդ մը՝ զոր բնագէտն բորսանօֆ կ'անուանէ Փողաձև
պատառաբոյծ (Tubularia parasitica).

Դարձեալ ի պատկերի կը տեսնուի որ գնայուն պողիպոդի ներ-
քին երեսը բոլորովին տարբեր է վերինէն։ կենդանին այս ներքին
երեսին վրայ օձի մը նման կը սողայ և կը շարժի։ Ընդ բովանդակ
երկայնութիւն այս երեսին կը տեսնուին երկու զուգահեռական ակօ-
սաձև գիծեր, որոնք երեք մասի կը բաժնեն երեսը, երկու՝ կողման-
կան և մի միջին, կողմանականներուն լայնութիւնը գրեթէ միջնոյն լայ-
նութեան կէսն է։ Դարձեալ այս երկու կողմանական մասերն իսկ ի-
րարու նման չեն ամենէին։ Միջին բաժանման վրայ կը դտնուին ցիր
և ցան անկանոն կերպով կիտանշաններ, որոնք կը համապատասխա-
նեն մարմնոյն վերին երեսին վրայ դտնուած ուռեցքներուն, որոնց
ամենուն զլուխն ալ ծակ է։

Հստ արտաքին ձևոյն միայն նկատելով Գնայուն Պողիպոդը, պիտի
շփոթէինք զայն գետնասող որդի մը հետո թայց թէ որ որդ լինէր պէտք
էր որ մարմողական խողովակ մի ունենար որ ընթանար ընդ բովանդակ
երկայնութիւն մարմնոյն, և ուր երթային միանային մարմնոյն միւս ա-
մէն ծակերն ալ, Արդ՝ ի սա չկան այս ամէն բաներն. մարսողական խո-
ղովակին և ոչ շուքն անգամ կը տեսնուի։ Մարսողութեան պաշտօն
մատուցողն մարմնոյն կողերուն ծակատին են, և զորս պէտք ենք իրը
իւր բերանն համարիլ, ինչպէս են նաև բոլոր պողիպոդները, որոց
կարգին մէջ կը գասեն սպոնդն ալ, Գլխաւոր յատկութիւնն որով
կը զանազանին այս պողիպոդները սպոնդէն՝ յայսմ է, որ առաջին-
ները իրենց մարմնոյն մորթին վրայ անհամար ամենափոքր փամ-
փուշտներ ունին որոնք լի են թունաւոր հեղուկով մը, և այս փամ-
փշտին կից կը գտնուի գալարուն թել մը որ պատրաստ է միշտ եր-
կրնալու երբ առ ինքն օտար մարմին մը դպչի, և լիցընելու իւր
թոյնն իրեն դպչող կենդանոյն մարմնոյն մէջ։ Եւ այս է պատճա-
ռը որ սաստիկ կակիծ մը կ'իմանանք երբ կը գալինք ձեռքով ծովու
ֆեննաներու (anémone de mer) և ծովամայրերու։

Ա. Ճ Ա. Ռ.

Պատմական տեղեկութիւն։ Մասնաւոր ձեռագործ ճարտարու-
թիւն մ'է աճառի շինութիւնն և արժանաւոր է զիանալ սկզբունքնե-
րըն որ դիւրին են և կրնան օր մը օգատակար ըլլալ զիտցողին։

Աճառին գործածութիւնն ՚ի հնուց ծանօթ էր անկատար վի-
ճակի մէջ։ Թոյնք և Հովմայեցիք կը գործածէին, և կը հանէին տե-
սակ մը խոտէ, և կտակի մաքրութենէն զատ՝ ուրիշ բաներու մէջ